ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Տնօրեն Ն. Մկրտչյան
«01» 09 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ք. Երևան, Ավան

Թիվ 104 հիմնական դպրոց, VIII ա դասարան

ուսումնական հաստատության անվանումը՝ դասարան

Նունե Մելիսի Թոփչյան

դասղեկի ազգանունը՝ անունը՝ հայրանունը

«2022- 2023» ուսումնական տարի

Ուսումնական և կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. **Ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներ**
2. **Ուսումնադաստիարակչական աշխատանքներ**
   2.1. Քաղաքացիական-բարոյական դաստիարակություն
   2.2. Հոգևոր դաստիարակություն
   2.3. Գեղագիտական դաստիարակություն
   2.4. Ֆիզիկական դաստիարակություն
   2.5. Աշխատանքային դաստիարակություն
   2.6. Իրավական դաստիարակություն
   2.7. Գիտաճանաչողական դաստիարակություն
   2.8. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշխատանքի ուղղվածությունը	**Նախատեսված աշխատանք**	**Ժամկետը**	**Կատարող**
Կազմակերպչական աշխատանք Իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը,դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն,պարետի սահմանված կանոնների ծանոթացու	1.Աշխատանքային պլանի կազմում 2.Դասագրքերի բաշխում 3.Դասասենյակի կահավորում 4.Դասագրքերի վիճակի ստուգում 5.Հաճախման ամենօրյա հաշվառում 6.Դասագրքերի հանձնում գրադարանին	Սեպտեմբեր Սեպտեմբեր Սեպտեմբեր Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում Ուստարվա ավարտին	դասղեկ
Քաղաքացիական-բարոյական դաստիարակություն **Նպատակը՝** Աշակերտների մոտ ձևավորել քաղաքացիական բարձր գիտակցություն, խթանել բարոյական արժեքներ կրող անձի կայացմանը	Զրույց աշակերտների հետ հետևյալ թեմաներով՝ 1. Հարգանք 2. Պատասխանատվություն 3. Վարվեցողության նորմեր/կանոններ 4. Հանդուրժողականություն 5. Մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներ և արժեքներ	Ուսումնական տարվա ընթացքում	դասղեկ
Հոգևոր դաստիարակություն **Նպատակը՝**	1. Աշակերտների հետ քննարկել հոգևոր արժեքների մասին իրենց պատկերացումները, որոնք են դրանք	Ուսումնական տարվա ընթացքում	դասղեկ

Աշակերտների մոտ բարձրացնել հոգևոր արժեքների կրման, պահպանման կարևորությունը որպես պետության, ազգի կայունության, հարատևման և անվտանգության առաջնային նախապայմաններից մեկը	2. Խոսել Քրիստոնեության, հայ առաքելական եկեղեցու, հոգևոր արժեք ներկայացնող արվեստի գործերի, գրական ստեղծագործությունների, կոթողների, դրանց հեղինակների մասին:		
Գեղագիտական դաստիարակություն Նպատակը՝ Աշակերտների մոտ զարգացնել գեղեցիկի, էսթետիկի, բարձր ճաշակի մասին ճիշտ պատկերացումներ	1. Խմբային բանավեճեր, 2. Գեղեցիկի, էսթետիկի մասին կոլաժի պատրաստում	Ուսումնական տարվա ընթացքում	դասղեկ
Ֆիզիկական դաստիարակություն Նպատակը՝ Տեխնոլոգիաների և տեխնիկայի դարում պատանիներն ու երիտասարդներն ավելի քիչ ժամանակ են հատկացնում սպորտին: Հետևաբար նպատակն է բարձրացնել աշակերտների մոտ առողջ ապրելակերպի պահպանման կարևորությունը և դրան հետևելը	1. Արշավների կազմակերպում 2. Թեմատիկ զրույց աշակերտների հետ առողջ ապրելակերպին նպաստող գործոնների մասին	Ուսումնական տարվա ընթացքում	դասղեկ
Աշխատանքային դաստիարակություն՝ Նպատակը՝ Երեխայի մոտ աշակերտական տարիքից ինքնուրույնության, նախաձեռնողականության, աշխատանքային հմտությունների զարգացում	1. Կամավորական, հասարակական գործունեության մասին պատկերացումների փոխանցում աշակերտներին 2. Գործնական հասարակական աշխատանքների կազմակերպում	Ուսումնական տարվա ընթացքում	դասղեկ
Իրավական դաստիարակություն Նպատակը՝ Աշակերտների մոտ իրավագիտակցության մակարդակի բարձրացումն է, իրավաչափ վարքի սերմանումն ու կիրառումը, իրավագիտակից քաղաքացու կայացումը	Զրույց աշակերտների հետ հետևյալ թեմաներով՝ 1. Իրավունք և պարտականություն 2. Իրավուքների իմացության կարևորությունը 3. Այլոց իրավունքները հարգելը	Ուսումնական տարվա ընթացքում	դասղեկ
Գիտաճանաչողական դաստիարակություն		Ուսումնական տարվա ընթացքում	դասղեկ

Նպատակը՝ Բարձրացնել աշակերտների տեղեկացվածությունն այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են էկոլոգիական խնդիրներն ու բնության հանդեպ հոգատար վերաբերմունքը, արտակարգ իրավիճակներն ու դրանց ժամանակ ճիշտ կողմնորոշվելու հմտությունները, պատմական, կրոնական հուշարձաններն ու դրանց պահպանությունը, գիտության նոր ձեռքբերումները:	Թեմատիկ քննարկում և վավերագրական ֆիլմերի դիտում աշակերտների հետ հետևյալ թեմաներով՝ 1. Արդի բնապահպանական հիմնախնդիրներ 2. Բնական և տեխնոծին աղետներ 3. Հայկական և համաշխարհային մշակութային և կրոնական կոթողներ 4. Գիտության նորարարական նվաճումներ		
Ռազմահայրենասիրական դաստիարակություն **Նպատակը՝** Պետության, հայրենիքի, պետության խորհրդանիշների, զինված ուժերի, զիվորական ծառայության նկատմամբ, որպես բարձրագույն արժեքներ, գիտակցության բարձրացումը, դրանց կայացման և զարգացման գործում յուրաքանչյուր անհատի դերի ու տեղի գիտակցումը:	Թեմատիկ քննարկում և վավերագրական ֆիլմերի դիտում հետևյալ թեմաներով՝ 1. Ինչ է պետությունը, հայրենիքը: 2. Պետության խորհրդանիշները որպես բարձրագույն արժեք 3. Բանակաշինություն, Հայկական զինված ուժերի ստեղծումը	Ուսումնական տարվա ընթացքում	դասղեկ

Դպրոց-ընտանիք կապը՝ Դպրոց-ծնող սերտ համագործակցությունը աշակերտի բարեկեցության, նրա ակադեմիական ու վարքային առաջադիմության, դաստիարակության, աշակերտի ընթացիկ խնդիրների ժամանակին վերհանման և լուծման կարևոր նախապայման է:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ու/շ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	Դպրոցի ներքին կարգապահական կանոնները	07.09	Կատարված է
II	Ի՞նչ է անկախությունը:	14.09	Կատարված է
III	Աշակերտի իրավունքները և պարտականությունները դպրոցում: *Թեմայի նպատակը՝ դպրոցի կանոնների օրինակով բացատրել առհասարակ կանոններին վարվեցողության նորմերին հետևելու և դրանք պահպանելու կարևորությունը*	21.09	Կատարված է
IV	Բարությունը, սերը, համերաշխությունը, հանդուրժողականությունը որպես առողջ	28.09	Կատարված է

	փոխհարաբերությունների հիմք		
V	Ընկերասիրություն: Ի՞նչն եմ կարևորում ընկերության մեջ	05.10	
VI	Գիտե՞մ արդյոք իմ իրավունքները և պարտականությունները	12.10	
VII	Հավասարության սկզբունքը և ներառականությունը	19.10	
VIII	Հետևու՞մ եմ արդյոք առողջ ապրելակերպին: Համարու՞մ եմ, որ իմ առողջ ապրելակերպին հատկացնում եմ բավարար ժամանակ	02.11	
IX	Անվտանգությունը համակարգչում: Ինչպես խուսափել վտանգներից	09.11	
X	Ինչպե՞ս պահպանել բնությունը, էկոլոգիական հիմնախնդիրներ	16.11	
XI	Բնական աղետների տեսակները, ի՞նչ պետք է իմանալ աղետների մասին և ինչպե՞ս պաշտպանվել	23.11	
XII	Պատասխանատվությունը որպես հոգեսոցիալական բաղադրիչ	30.12	
XIII	Ամանոր և Սուրբ Ծնունդ: Խորհուրդն ու նշանակությունը	07.12	
XIV	Ժամանակի կառավարումը տեխնիկայի դարում (սոցիալական կայքերից, համակարգչային խաղերից կախվածությունը և առողջ ապրելակերպը)	14.12	
XV	Հայոց բանակի կազմավորումը, դերն ու նշանակությունը	21.12	
XVI	Կոնֆլիկտի խաղաղ լուծման հմտությունները	11.01	
XVII	Ազգային եկեղեցական տոներ	18.01	
XVIII	Ճանաչու՞մ եմ արդյոք հայկական հուշարձաններն ու կոթողները:	25.01	
XIX	Բնութագրիր ինքդ քեզ	01.02	
XX	Գիրքն իմ առօրյայում: Կարդում եմ արդյո՞ք	08.02	
XXI	Ռոբոտներ՝ դրական և բացասական հետևանքներ	15.02	
XXII	Գեղեցիկի և ճաշակով լինելու մասին իմ պատկերացումները	22.02	
XXIII	Եթե ես լինեի ուսուցիչ…	01.03	
XXIV	Շրջապատի, միջավայրի նկատմամբ ուշադրության մասին	08.03	
XXV	Կամավորական, հասարակական աշխատանքը որպես հետագայի համար արդյունավետ փորձ	15.03	
XXVI	Իմ սերը դեպի հայրենիքը	22.03	
XXVII	Պետական խորհրդանիշներ՝ ստեղծումը, դերն ու նշանակությունը	05.04	
XXVIII	Հայոց Մեծ եղեռն, պատմական ակնարկ, պատճառներ	12.04	
XXIX	Ի՞նչ մասնագիտություններ գիտեք: Որ մասնագիտություններով է այսօր հեշտ Հայաստանում գտնել աշխատանք	19.04	
XXX	Ազգային հերոսներ, սխրագործությունները, հերոսները որպես օրինակ: Ներկայացնում են	26.04	

	աշակերտները		
XXXI	Իմ ձեռքբերումները և իմ նախասիրություններն ուսումնական տարվա ընթացքում	03.05	
XXXII	Ազգ, կրոն, եկեղեցի: Քրիստոնեության և եկեղեցու դերը հայոց պետականության մեջ	10.05	
XXXIII	Ընտանիքի և ընտանեկան արժեքների դերը հայապահպանության մեջ	17.05	
XXXIV	Գնահատիր ինքդ քեզ՝ ինչպիսի աշակերտ ես եղել այս ուսումնական տարում	24.05	

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
Չորեքշաբթի	8ժամ	Չորեքշաբթի	8 ժամ